Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 08.ՀՈՒՆԻՍԻ ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 144-Լ

ՀՐԱՄԱՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՄՈՏ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԴՐԱՄԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ԵՎ ԱՅԼ ԻՐԵՐԻ ԱՌԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 130-Լ հրամանի հիման վրա կատարված ծառայողական քննության արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի» պահանջները՝ Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց կամ դատապարտյալների մոտ հայտնաբերված դրամի, թանկարժեք և այլ իրերի առգրավման ու վերադարձման գործընթացը կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով .

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Քրեակատարողական հիմնարկների պետերին՝

ա) Կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական, խցի կամ կացարանի խուզարկության ժամանակ հայտնաբերված դրամի և այլ թանկարժեք կամ հնարավոր թանկարժեք իրերի (մատանի, շղթա, թևնոց, զարդեր և այլն)

առգրավման մասին պարտադիր կարգով կազմել համապատասխան արձանագրություն, որտեղ մանրամասնորեն նշել առգրավվող գումարի չափը, իրերի արտաքին նկարագիրը, չափսերը, ինչպես նաև հնարավորության դեպքում կատարել դրանց լուսանկարում և լուսանկարները կից հավելվածի տեսքով կցել արձանագրությանը: Ընդ որում և՛ արձանագրությունը, և՛ հավելվածը հաստատվում են նաև այն անձանց ստորագրություններով, ով հայտաբերել է դրամը կամ իրերը, և ումից կատարվել է առգրավումը, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ արձանագրության մեջ այդ մասին կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

բ) Ձերբակալվածների պահման վայրերից բերված կալանավորված անձանցից առգրավված դրամը և այլ թանկարժեք կամ հնարավոր թանկարժեք իրերը համեմատել ուղեկցող փաստաթղթերում նշվածների հետ, որից հետո կատարել սույն հրամանի 1-ին կետի ա), գ) և դ) ենթակետերում նշված գործողությունները:

գ) Ձերբակալվածների պահման վայրերից ստացված, կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական, խցի կամ կացարանի խուզարկության ժամանակ առգրավված դրամը, ինչպես նաև նրանց անունով այլ անձանցից ստացված դրամական միջոցները հանձնել Հիմնարկի ֆինանսական ստորաբաժանմանը, որը ոչ ուշ քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրանք փոխանցում է նրանց անձնական հաշվին:

դ) Ձերբակալվածների պահման վայրերից ստացված, ինչպես նաև կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական, խցի կամ կացարանի խուզարկության ժամանակ առգրավված թանկարժեք կամ հնարավոր թանկարժեք իրերը փաթեթավորել և կնքել պատասխանատու հերթապահի կնիքով, որից հետո արձանագրության մեկ օրինակի հետ միասին, հիմնարկի պետի կամ տեղակալի գրավոր հանձնարարությամբ ի պահ հանձնել Հիմնարկի ֆինանսական ստորաբաժանմանը՝ մետաղյա չիրկիզվող պահարանում պահելու համար: Ընդ որում, փաթեթի վրա ստորագրում են առգրավումն իրականացրած ծառայողը, ինչպես նաև կալանավորված անձը կամ դատապարտյալը, որի վերաբերյալ ևս

նշվում է արձանագրության մեջ, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ արձանագրության մեջ այդ մասին կատարվում է համապատասխան նշում:

Ֆինանսական ստորաբաժանման աշխատակիցը առգրավված դրամական միջոցները, թանկարժեք կամ հնարավոր թանկարժեք իրերի փաթեթները ստանալու վերաբերյալ համապատասխան նշում է կատարում առգրավման արձանագրության կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործի մեջ կարվող օրինակի վրա: Ֆինանսական ստորաբաժանումը վարում է իրեն հանձնված նյութական արժեքների հաշվառման և շարժի մատյան, որը պետք է լինի կարված, համարակալված և կնքված համապատասխան Քրեակատարողական հիմնարկի կնիքով:

ե) Ձերբակալվածների պահման վայրերից ստացված, կալանավորված անձանց կամ դատապարտյալների կողմից հանձնված, ինչպես նաև նրանց անձնական, խցի կամ կացարանի խուզարկության ժամանակ առգրավված կամ Հիմնարկի տարածքից հայտնաբերված արգելված այլ իրերը (քաղաքացիական հագուստ, բջջային հեռախոս և այլն), առգրավման արձանագրության մեկ օրինակի հետ միասին, հիմնարկի պետի կամ տեղակալի գրավոր հանձնարարությամբ ի պահ հանձնել Հիմնարկի տնտեսական ապահովման բաժնին, իսկ դրանց պահպանման համար Հիմնարկում առանձնացնել համապատասխան պայմաններ ունեցող կողպվող պահասենյակ:

Տնտեսական ապահովման բաժնի աշխատակիցը առգրավված արգելված իրերը ստանալու վերաբերյալ համապատասխան նշում է կատարում առգրավման արձանագրության կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործի մեջ կարվող օրինակի վրա:

զ) Կենտրոնացված հաշվառում իրականացնելու նպատակով արգելված իրերի հայտնաբերման և առգրավման արձանագրությունների մեկական օրինակները հանձնել Հիմնարկի անվտանգության ապահովման բաժնին, որը վարում է վերը նշված իրերի հաշվառման և շարժի մատյան: Մատյանը պետք է լինի կարված, համարակալված և կնքված համապատասխան Քրեակատարողական հիմնարկի կնիքով:

է) Ձերբակալվածների պահման վայրերից ստացված, ինչպես նաև կալանավորված անձանց կամ դատապարտյալների կողմից հանձնված զինվորական կամ այլ հատուկ համազգեստները, համապատասխան հիմքերի առկայության դեպքում, հանձնել այն զորամասերին կամ մարմիններին, որոնց հաշվեկշիռներում դրանք հաշվառված են:

ը) Ձերբակալվածների պահման վայրերից ստացված, ինչպես նաև կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական, խցի կամ կացարանի խուզարկության ժամանակ առգրավված թանկարժեք (կամ հնարավոր թանկարժեք) կամ այլ արգելված իրերը (այդ թվում՝ բջջային հեռախոսները), որոնց պատկանելիությունը պարզված է, ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի» 94-րդ կետով սահմանված կարգով կալանավորված անձի կամ դատապարտյալի հաշվին ուղարկել նրա մատնանշած անձին, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ չկան:

թ) Հաշվառել Ձերբակալվածների պահման վայրերից ստացված, կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական, խցի կամ կացարանի խուզարկության ժամանակ առգրավված կամ հիմնարկի տարածքում հայտնաբերված այն բջջային հեռախոսները, որոնց պատկանելիությունը պարզված չէ, չունի սեփականատեր, կամ սեփականատերը անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից և ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության իրավաբանական բաժնի հետ համատեղ, 20-օրյա ժամկետում, հայցադիմումներ ներկայացնել համապատասխան դատարաններ՝ նշված գույքը հօգուտ պետության տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ:

Սույն ենթակետում նշված գործառույթն իրականացնել յուրաքանչյուր կիսամյակ՝ դրա ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ժ) Կալանավորումից կամ պատժից ազատված անձանց իրերը և անձնական հաշվում առկա դրամը վերադարձնելու, կամ առգրավված իրերը կալանավորված անձանց կամ դատապարտյալների լիազորված անձանց հանձնելու դեպքում կազմել

համապատասխան արձանագրություն՝ նշելով ստացողի անհատական և անձը հաստատող փաստաթղթի (կամ այլ փաստաթղթի) տվյալները: Ընդ որում, փաթեթները բացել ստացող անձի ներկայությամբ՝ հավաստիանալով դրանց անխախտ լինելու մեջ, արձանագրության մեջ նշել վերադարձվող դրամի չափը, փաթեթավորման անխախտ լինելը, վերադարձվող իրերը և դրանց արտաքին նկարագիրը: Արձանագրությունը ստորագրվում է պատասխանատու ծառայողի և նյութական արժեքները ստացող անձի կողմից, որը կցվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին:

ի) Պատիժը կրելու համար այլ Հիմնարկ տեղափոխվող անձանց իրերը կից գրությամբ, ուղեկցող ստորաբաժանման աշխատակիցների միջոցով ուղարկվում են տվյալ հիմնարկ: Գրության մեջ նշվում են նաև տեղեկություններ տեղափոխվող անձանց հաշիվներում առկա դրամական միջոցների մասին:

ՈՒղեկցող ստորաբաժանման իրերը ստացած աշխատակիցը, ոչ ուշ քան 10-օրյա ժամկետում, կից գրության երկրորդ օրինակը՝ իրերը ստանալու վերաբերյալ պատիժը կրելու վայրի՝ Հիմնարկի պատասխանատու հերթապահի կնիքով հանսատված նշումով, վերադարձնում է դրանք ուղարկող Հիմնարկին:

Պատիժը կրելու համար կամ այլ երկիր տեղափոխվող անձանց իրերը և անձնական հաշվում առկա դրամը հանձնվում են ուղեկցումն իրականացնող իրավասու անձանց սույն հրամանի 1-ին կետի ժ) ենթակետով սահմանված կարգով:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության իրավաբական բաժնի պետին՝

Սույն հրամանի 1-ին կետի թ) ենթակետում նշված գործառույթն իրականացնելիս հայցադիմումների ճիշտ կազմման և համապատասխան հիմնավորումների ապահովվման համար Հիմնարկներին ցուցաբերել անհրաժեշտ խորհրդատվություն:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել քրեակատարողական վարչության պետի առաջին տեղակալ, արդարադատության գեներալ-մայոր Ռ.Հովհաննիսյանին և վարչության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ Մ.Հարությունյանին:

4. Հրամանը ծանոթացնել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և քրեակատարողական հիմնարկների ծառայողներին:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի 10.10.2006թ. տրված թիվ40/7-7327 հանձնարարականը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԱՐԹՈՒՐ ՕՍԻԿՅԱՆ